



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2019

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 78

### ԱՍՏՈՒԱԾ ԻՆՉՊԷՏ ԱՌԱՋՆՈՐԴԵՑ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԻՆ

Լսեցէք ինչ որ կ'ուսուցանեն, ով իմ ժողովուրդս, ականջ դրէք ըսելիքներուս: Աստուած զանոնք բերաւ իր Սուրբ Երկիրը, այս լեռը, որ իր զօրութեամբ նուաճեց: Բայց անոնք փորձեցին եւ դառնացուցին Բարձրեալ Աստուածը, եւ անոր պատուիրանները չպահեցին, այլ՝ հեռացան, դաւաճանեցին իրենց նախահայրերուն նման, անվստահելի ծուռ աղեղի պէս: Բարձունքներուն վրայ կանգնուած բազիններով բարկացուցին զԱստուած: Աստուած տեսաւ ու զայրացաւ, եւ անբողջապէս մերժեց իր ժողովուրդը: Թոյլ տուաւ որ թշնամին գերի առնէ Տապանակը, նշանակը իր զօրութեան եւ փառքին: Սրակտոր ընել տուաւ իր ժողովուրդը, իր զայրոյթը թափեց իր սեփական ժառանգութեան վրայ: Կրակը լափեց անոնց երիտասարդները, եւ աղջիկները մնացին առանց ամուսնութեան: Քահանաները սրամահ եղան, եւ անոնց այրիները սզալու առիթ չունեցան: Ապա Տէրը կարծես քունէն արթնցաւ, գինիէն սթափող հերոսի մը պէս: Ետ մղեց իր ոսոխները, յաւիտենական նախատինքի ենթարկելով զանոնք: Մերժեց Յովսէփի երկրամասը, չուզեց Եփրեմի ցեղը, այլ՝ Յուդայի ցեղը ընտրեց, եւ Սիոն լեռը նախըտրեց: Հոն շինեց իր Սրբարանը՝ երկինքի նմանութեամբ, եւ երկրին պէս հաստատուն յաւիտեան:

### ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Վմենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղեղոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

## ՕՐՈՎԱՆ ՆԻԹԸ



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԻԱՅԻ

7:16-34

### ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ԱՆՆԱԶՆԱԴՈՒԹԻՒՆԸ (7:16-28)

Այնպես ինչպես Աբրահամի պարագային (Մոդոն - Գոմոր), Մովսեսի պարագային (Ելից 32:10), այսպեղ եւս մարգարէն ոչ միայն Աստուծոյ պարգամները փոխանցող Աստուծոյ բերանն է, Աստուծոյ խօսնակն է, այլ նաեւ՝ ժողովուրդին ներկայացուցիչը Աստուծոյ մօտ, ժողովուրդին համար բարեխօսը, բայց այս պարագային, Տէրը կ'արգիլէ որ Երեմիա մարգարէն բարեխօսութիւն ընէ, որովհետեւ անոնք մտնէին պիտի չընեն. «**Դուն այս ժողովուրդին համար աղօթք մի՛ ըներ եւ անոնց համար աղաղակ ու աղաչանք մի՛ մատուցաներ ու բարեխօսութիւն մի՛ ըներ, որովհետեւ քեզի մտնէին պիտի չընեն**» (16 հմր): Միակ փարբերակը ապաշխարութիւնն է, եթէ չապաշխարեն, որ կը նշանակէ դարձի գալ, ամբողջութեամբ հրաժարիլ եւ Աստուծոյ վերադառնալ:

Որովհետեւ անոնք այնպիսի զգուելի բաներ կ'ընեն, ոչ թէ զաղտնաբար, այլ՝ բացայայտ քաղաքներու եւ փողոցներու մէջ, որ կը նշանակէ այլ իրենց մեղքը ամենուրեք է, եւ այլեւս կարելի չէ ծածկել (17 հմր): Իսկ այս մեղքին մէջ բոլորը մասնակից են. փոքրները, հայրերը, կիները, այլ խօսքով՝ ընտանիքի բոլոր անդամները իրենց բաժինը կը բերեն հեթանոսական պաշտամունքին, երկինքի թագուհիին, այս պարագային՝ լուսնի պաշտամունք, ինչպէս նաեւ ամբողջ երկնային համակարգը, ծանօթ է որպէս Աշտարոյթ անունով (18 հմր): Ուրեմն, այս ընելով ինչ կ'ընեն. Տէրը կը բարկացնէ՞ն, թէ իրենք զիրենք կը խռովեցնեն, որովհետեւ իրենց ըրածին պտուղը պիտի քաղեն (19 հմր): Ահա այս իսկ պարճառով Տիրոջ բարկութիւնը անոնց վրայ պիտի թափի մարդու եւ անասունի, դաշտի ծառերուն ու երկրի պտուղներուն, այսինքն՝ այն բոլորին ինչ որ իրենք որպէս ընծայ կ'ընծայէին օտար աստուածներուն, եւ ասի պիտի բռնկի ու պիտի չմարի (20 հմր): «**Ձեր ողջակէզները ձեր գոհերուն վրայ աւելցուցէք եւ միս կտրէք**» (21 հմր), կը նշանակէ ձեր գոհերը ընդունելի չեն Աստուծոյ: Տէրը յարակօրէն անգամ մը եւս կը յիշեցնէ ըսելով. «**Ձեր հայրերը Եգիպտոսէն հանած օրս, անոնց բան մը չըսի ողջակէզի ու գոհի մասին, ոչ ալ անոնց հրամայեցի, այլ ըսի՝ Իմ ձայնիս մտնէին ըրէք, եւ ձեզի Աստուած ըլլամ ու դուք ինծի ժողովուրդ եղէք: Ձեզի հրամայուած ճամբաներուն մէջէն քալեցէք, որպէսզի ձեզի աղէկ ըլլայ**» (23 հմր): Զգուշ, անցեալին փրուած այդ գոհերը փրուեցան որպէս դաստիարակութիւն եւ ոչ որպէս նպասակ: Աստուծոյ նպասակն էր այս ժողովուրդը դաստիարակել եւ Իրեն սեփական ժողովուրդ դարձնել, եւ որպէս այդպիսին փուսա դաստիարակիչ բնոյթ ունեցող երեւոյթներ, որպէսզի անով սորվին: Բայց անոնք, ընդհակառակը կարոջեցան երեւոյթին եւ մոռցան հոգեւոր իմաստը այդ բոլորին: Այս բոլորը գալիքին շուքն են (Եբր 10:1) եւ ոչ թէ նպասակը: Տէրը Եգիպտոսէն ելած օրէն Իր ծառաները դրկեց, մարգարէներ (25 հմր), որպէսզի Տիրոջ խօսքը լսեն ու գործադրեն, բայց անոնք մտնէին ու ականջ չկախեցին, հապա իրենց պարանոցը խստացուցին եւ իրենց հայրերէն ատի չար եղան (26 հմր): Ուրեմն, «**Իր Տէր Աստուծոյն ձայնին մտնէին չընողը, ու խրատ չընդունողը ճշմարտութիւնը պիտի կորսուի ու անոնց բերնէն պիտի կտրուի**» (28 հմր): Ուզուածը հնազանդութիւն եւ սրբագրութիւն:

### ՄԵՂՍԱՎԻՑ ԳՈՐԾԵՐ ԵՆՈՎՄԻ ՉՈՐԻՆ ՄԷՋ (7:29-34)

Ահա պատուէր մըն որ կը փոխանցուի Երուսաղէմին. «**Մազերդ կտրէ ու նետէ, ով Երուսաղէմ, եւ բլուրներու վրայ ողբայ. որովհետեւ Տէրը մերժեց ու երեսէ ձգեց այն ազգը որուն դէմ սրդողեր էր**» (29 հմր): «**Մազերդ կտրէ**»: Նախ մազերը չկտրելը ուխտի նշան էր (Թուոց 6:7), որ կը կոչուէր նաեւ Նազիր, ուրեմն մազերը կտրէ կը նշանակէ ուխտը կտրել: Նաեւ Մեմական մշակոյթի համաձայն մազերը կտրել նաեւ կը խորհրդանշէր սուգի նշան ինչպէս կը կարդանք Յոբ 1:20, Միքիա 1:16: Կարծէք կին մը որ իր ամուսինէն մերժուած: Որովհետեւ այս ժողովուրդը նաեւ Աստուծոյ անունով կոչուած փանը մէջ դրին զարշելի բաներ ու անով այդ փունը պղծեցին (30 հմր) հմմտը Դ Թագ 21:1-9: Տէրը սկիզբէն յիշեցուց ու ազդարարեց որ այսպիսի բաներ չընեն. «**Իմ հրամանիս հակառակ՝ երթայ ուրիշ աստուածներու, արեգակին կամ լուսնին եւ կամ երկինքի ոտէ՛ գարդի ծառայութիւն ու երկրպագութիւն ընէ, եւ եթէ ստուգուի, որ պղծութիւն եղած է, այն արեւն այս չարութիւն ընող անձը պէտք է մերցուի**» (Բ Օրինաց 17:3-5):

31 հմր կը ներկայացնէ այն զգուելի գործերը որու կը հետեւէին Իսրայելի ժողովուրդը, այնպիսի հեթանոսական պաշտամունքի ուր իրենց փղաքն ու աղջիկները կը զոհէին ու կրակէ կ'անցնէին, Մոդոքի պաշտամունքը (Ղեւր 18:21, 20:2-5): Ահա անոր համար ալ Ենովմի ձոր կը կոչուէր, որ պիտի կոչուի սպաննութեան ձոր: Երեւոյթ մը որ Տէրը երբեք ալ չէր հրամայած, այլ ընդհակառակը, այդ երեւոյթը որպէսզի չըլլայ Տէրը Աբրահամին ուրիշ օրինակ մը փուած էր Իսահակի զոհագործումին առիթով, որպէսզի երեխային ձեռք չտար, Աստուած ուրիշ զոհ մը պատրաստած էր (հմմտ Մենդ 22): Կարդալ Դ Թագ 23: Ահա այդ պաշտամունքը բարձր փեղը ալ «**Տօփեթ կամ Ենովմի որդիին ձորը պիտի չկոչուի, հասպա՝ սպաննութեան ձոր**» (32 հմր): Ահաւոր վիճակի մը պատկերացումը կու փայ 33 հմր, ուր դիակները կեր պիտի ըլլան երկնիք թռչուններուն ու երկրի գագաններուն: Առաւել եւս, ուրախութեան ու ցնծութեան ձայնը, փեսայի ու հարսի ձայնը պիտի դադրի, որովհետեւ երկիրը պիտի ամայանայ (34 հմր):